ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

_____№ _____

Ձեր N _____

ՀՀ ՄԱՐԶՊԵՏՆԵՐԻՆ

Հարգելի՛ գործընկեր,

Տեղեկացնում եմ, որ ՀՀ կառավարության 2025 թվականի ապրիլի 17-ի թիվ 449-Ն որոշման (հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=205805) հավելված 2-ով Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում «Բուժական գործ» մասնագիտությամբ (դասիչը, ուսուցման ձևը՝ 091201.01.7) սահմանված է 47 նպատակային ուսուցման տեղեր՝ մասնավորապես Արմավիրի, Արարատի, Արագածոտնի, Շիրակի, Գեղարքունիքի, Լոռու, Վայոց ձորի, Տավուշի և Սյունիքի մարզերին կտրամադրվել է հնգական, իսկ Կոտայքի մարզին՝ երկուական տեղ: Վերոգրյալ մասնագիտությամբ 2025-2026թթ. ուսումնական տարվա առկա ուսուցմամբ անընդհատ և ինտեգրված կրթական ծրագրերով ընդունելության քննությունների նպատակային ուսուցման տեղերի մրցույթին մասնակցելու համար դիմորդները սահմանված կարգով՝ https://dimord.am կայքով հայտ ներկայացնելիս պետք է պարտադիր նշեն «Նպատակային ուսուցում» կոճակը: Նպատակային տեղերում ընդունված ուսանողները սովորում են անվճար և ուսումնառության ընթացքում ստանում են կրթաթոշակ: Նպատակային տեղերում ընդունված դիմորդները պայմանագիր են կնքելու ՀՀ առողջապահության նախարարության հետ, որի համաձայն ուսումն ավարտելուց և ինքնուրույն մասնագիտական գործունեություն իրականացնելու իրավունք ձեռք բերելուց հետո պարտավորվում են վերադառնալ մարզ, առնվազն 3 տարի ժամկետով աշխատել մարզի բժշկական կազմակերպություններում:

Խնդրում եմ Ձեր աջակցությունը վերոգրյալի վերաբերյալ իրազեկել մարզի բնակչությանը՝ աջակցելով սահմանված նպատակային տեղերի ամբողջական համալրմանը, ի նպաստ մարզային բժշկական կազմակերպությունների բժշկական կադրերի հագեցվածության:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Invalid signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Կատարող՝ Դավիթ Հովսեփյան
Անձնակազմի կառավարման վարչություն
Հեռ.՝ 060 808003/1505/